- արտաքին առևտրի հաշվեկշռի բարելավում՝ ներմուծման սահմանափակման և արտահանման սուբսիդավորման միջոցով,
- ազգային գյուղատնտեսության պահպանումն ու զարգացումը, որպես ամբողջ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը:

Պետության լայն միջամտությունը տնտեսության մեջ, մասնավորապես՝ գյուղատնտեսության արտադրական և սոցիալական մեխանիզմներում պահանջում են նշանակալի ծախսեր: Այսպես օրինակ, «Ավստրալիայում գյուղատնտեսության պետական աջակցության մակարդակը ամբողջ արտադրանքի նկատմամբ կազմում է 44 %, Կանադայում՝ 35 %, Ֆինլանդիայում՝ 72 %, Շվեդիայում՝ 47 %, Ճապոնիայում՝ 72 %, Շվեցարիայում՝ 76 %, Եվրամիությունում՝ 37 %, ԱՄՆ-ում 27-40 %: Իրականում ֆերմերը, այս երկրներում, շուկայական վճարմամբ ստանում է գնի մի մասը, եկամուտների զգալի մասը ստացվում է պետական աղբյուրներից»[1]:

Հայաստանի Հանրապետությունում վիճակը այլ է, որը պայմանավորված է երկրի բյուջետային հնարավորություններով: Չնայած վերջին տարիներին գյուղատնտեսությանը հատկացվող բյուջետային միջոցները տարեցտարի ավելանում են, սակայն դրա մասնաբաժինը գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ չի գերազանցում 2 %-ի սահմանը: Այդ մասին է վկայում ՀՀ պետական բյուջեից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը (գյուղատնտեսության զարգացման համար) հատկացված միջոցների և գյուղատնտեսության համախառն արտադրանքի համադրման տվյալները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ պետական բյուջեից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը (գյուղատնտեսության զարգացման համար) հատկացված միջոցները և գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2002-2006թթ.

	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.
Բյուջետային հատկացումները,մլն դրամ	2197.5	2472.6	3231.0	3728.4	6155.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը տվյալ տարվա գներով, մլրդ դրամ	377.6	410.1	504.1	493.0	555.9
Բյուջետային հատկացումների մասնաբաժինը համախառն արտադրանքի նկատմամբ, %	0.6	0.6	0.64	0.76	1.1

Պահանջարկի և առաջարկի հավասարակշռության պահպանումը, տեղական արտադրողների պաշտպանությունը, գյուղում կառուցվածքային և սոցիալական վերափոխումների իրականացումը կարող է կրել ինչպես տնտեսական, այնպես էլ վարչական բնույթ:

Գյուղատնտեսության պետական կարգավորման համակարգում առաջատար տեղ է հատկացվում գների համապատասխան մակարդակի և գնային հավասարակշռության պահպանմանը: Գնային մեխանիզմների ապահավասարակշռությունը հանգեցնում է քայքայիչ հետևանքների: Պարենամթերքների գնային համակարգի տատանումները մեղմվում է պետության միջամտությամբ: Ագրարային քաղաքականությանն ուղղվող պետական ծախսերի գերակշռող մասը պետք է ուղղվի գների պահպանմանը:

ԱՐԱՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր
ԱՐՏԱՎԱԶԴ ՕՀԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի հանրապետության թեթև արդյունաբերությունը նախորդ դարի 80-ական թթ. հանդիսանում էր երկրի արդյունաբերության ամենազարգացած հատվածներից մեկը: Այս ճյուղում զբաղված էր մոտ 115 հազար աշխատող և տալիս էր երկրի ընդհանուր արտադրանքի մոտ 25 տոկոսը: Արդյունաբերության այս ճյուղը մեր հանրապետությունում հիմնված էր տեքստիլ արտադրության ու կարպետագործության ասպարեզներում դարերով, ինչպես նաև կոշկեղենի համեմատաբար վերջին ժամանակներս զարգացած ենթաճյուղում ձեռք բերված փորձի վրա: Պետք է նշել նաև, որ դրանք մեծ համբավ ունեին նախկին Խորհրդային Միության և «սոց. ճամբարի» այլ երկրներում:

ԽՍՀՄ-ի փլուզման հետ մեկտեղ կորցվեցին նաև այս ճյուղի հիմնական ու ավանդական շուկաները: Պայմանավորված լինելով արտաքին առևտրի ազատականացման բուռն գործընթացներով ու դրանից բխող և օրեցօր ուժեղացող միջազգային մրցակցության բարձր աստիճանով՝ երկրի արդյունաբերության այս ճյուղի համար երկար ժամանակ խիստ դժվար էր ապահովել արտադրանքի մուտքը նոր շուկաներ: Արդյունքում 90-ականներին գրեթե ամբողջությամբ փլուզվեց թեթև արդյունաբերության ճյուղը: Այդ շրջանում երկրի ընդհա-

[1] Коваленко Н.Я. Экономика сельского хозяйства. С основами аграрных рынков. Курс лекций.-М.: Ассоциация авторов и издателей. ТАНДЕМ: Издательство ЭКМОС, 1998. с.107.

նուր արդյունաբերական արտադրանքի մեջ այս ճյուղի արտադրանքի ծավալները չէին անցնում 2 տոկոսից: Դրան զուգընթաց թեթև արդյունաբերության արտադրանքի ներմուծումը դեպի մեր երկիր իսկական պայթյունի էր նմանվում և Հայաստանի Հանրապետությունը սկսած 1996 թ-ից շարունակաբար արձանագրում էր առևտրային պակասորդ՝ տեքստիլի, կոշկեղենի և կարպետեղենի գծով[1]:

Ներկայումս տեքստիլ ու հագուստի արտադրությունը համարվում է Հայաստանի թեթև արդյունաբերության հիմնական ենթաճյուղերը: Այս ճյուղում վերջին տարիներին տեղ գտած հիմնական փոփոխությունը կարի արտադրանքի արագ ընդլայնումն էր՝ ի վնաս տրիկոտաժի և հարակից արտադրանքների: Անհրաժեշտ է նշել, որ այս միտումն արդյունք էր ճյուղի որոշ ձեռնարկությունների կողմից մի քանի ամերիկյան ֆիրմաների՝ հատկապես ԱՄԵՐԵՔՍ ընկերության հետ կնքված պայմանագրային փոխհարաբերությունների: Արդյունքում Հայաստանի թեթև արդյունաբերական արտադրանքի արտահանումը հիմնականում ոչ տրիկոտաժե արտադրանքի մասով էր (Տե՛ս գրաֆիկ 1):



Գրաֆիկ 1. Թեթև արդյունաբերության արտահանման դինամիկան 2003-2006թթ. (հազ. ԱՄՆ դոլար)[2]

Իրավիճակի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ենթապայմանագրային գործունեությունից այսպիսի մեծ կախվածությունը, ինչպես նաև գնորդների սահմանափակ քանակությունը Հայաստանի թեթև և հատկապես տեքստիլ արդյունաբերության համար մեծ ռիսկ և ենթաճյուղի զարգացման անկայունության լուրջ աղբյուր են հանդիսանում: Ճյուղում ներգրավված մի շարք ընկերությունների արտադրական գործունեությունն այժմ կարելի է ասել որոշվում է նշված արտաքին պատվերների հիման վրա, իսկ աշխատողների զբաղվածությունը շատ տատանվող է: Ստորև բերված գրաֆիկը պարզորոշ ցույց է տալիս ճյուղում զբաղվածության ընդհանուր մակարդակն ու դինամիկան վերջին տարիների ընթացքում (Տե՛ս գրաֆիկ 2):



Գրաֆիկ 2. Թեթև արդյունաբերության ենթաճյուղերի ձեռնարկությունների աշխատողների թվաքանակի դինամիկան 2006-2007թթ. հունվար-հունիս ամիսներին[3]

Ինչպես երևում է գրաֆիկից, փորձ է արվել ձեռնարկությունները բաժանել նաև ըստ աշխատողների թվաքանակի, որպեսզի հնարավոր լինի տալ ստացված պատկերի առավել ամբողջական բացատրությունը: Ստացվում է, որ ըստ ՀՀ վիճակագրական ծառայության տվյալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

[1] 1999 թ-ին այդ պակասորդը կազմում էր 21 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:
[2] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006:
[3] Աղբյուրը՝ նույն տեղում:

համեմատությամբ թեթև արդյունաբերության բոլոր ենթաճյուղերում էլ տեղի է ունեցել աշխատողների թվաքանակի կրճատումներ, ընդ որում, հագուստի արտադրության ենթաճյուղում այդ կրճատումներն ավելի մեծ տեսակարար կշիռ են կազմել 6-50 մարդ ունեցող ձեռնարկություններում: Թեպետ մնացած ենթաճյուղերում այս նվազումը համեմատաբար ավելի հարթ է բաշխվել, այնուամենայնիվ աշխատողների կրճատումներ տեղի են ունեցել մինչև 50 մարդ ունեցող ձեռնարկություններում: Այս թվերը ապացույցն են այն բանի, որ դիտարկվող ժամանակաշրջանում ճյուղի ձեռնարկություններում զբաղվածների թվի նվազումը չի խոսում նաև արտադրության և արտադրանքի ծավալների կամ դրանց արտադրական արդյունավետության էական ընդլայնման օգտին: Այն իր ֆիզիկական (ծավալային) ու մոնետար արտահայտությունն է գտնում ինչպես ներճյուղային ցուցանիշներում, այնպես էլ ընդհանուր վերցված՝ թեթև արդյունաբերության թողարկման արդյունքների մեջ: Այս ամենի հետ մեկտեղ՝ պետք է նշել նաև, որ պայմանագրային ռազմավարությամբ գոյատևող ընկերությունների և արդյունաբերության այս ճյուղի համար ընդհանրապես առկա է նաև սեփական դիզայնով արտադրանքի ու սեփական հավաքածուի ստեղծման կարողությունների կորուստը, ինչը լուրջ հարված կարող է լինել այս ճյուղի հետագա գոյատևման, էլ չենք խոսում զարգացման ու մրցունակության բարձրացման առումով: Ասվածն առավել համոզիչ դարձնելու նպատակով կառուցվել է երկրի ընդհանուր արդյունաբերության մեջ թեթև արդյունաբերության ճյուղի զարգացման դինամիկան կամ, ավելի ճիշտ, կառուցվել է մի ինդեքսավորված կոր, որը ցույց է տալիս ընդհանուր արդյունաբերության մեջ թեթև արդյունաբերության տեսակարար կշիռը (Տե՛ս գրաֆիկ 3):



Գրաֆիկ 3. Թեթև արդյունաբերության տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ 2001-2005թթ.[1]

Միտումների առավել խոր ընկալման համար փորձ է արվել այն տրոհել ըստ ենթաճյուղերի: Ըստ էության՝ խնդիրը կայանում է ճյուղի որոշակի ենթաճյուղերում արձանագրված ծավալային ու գնային համադրության կառուցվածքային փոփոխությունների մեջ: Այս երևույթի բացատրությունը կարելի է գտնել՝ ուսումնասիրելով ենթաճյուղերում գրանցված ցուցանիշներն ու դրանց դինամիկան՝ ըստ ծավալների: Դիցուք, ըստ տնտեսական գործունեության տեսակների կամ ենթաճյուղերի արտադրանքի ծավալների՝ համեմատական ինդեքսներն ընդհանուր արդյունաբերության համեմատությամբ արձանագրել են հետևյալ պատկերը (Տե՛ս գրաֆիկ 4):



Գրաֆիկ 4. Արտադրանքի ծավալի ինդեքսներն ըստ ճյուղի տնտեսական գործունեության տեսակների[2]

Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ արդյունաբերության այս ճյուղի համեմատական մրցունակությունը մինչև վերջին ժամանակներս ապահովվում էր ոչ բարձր որակի արտադրանքի ստեղծման շնորհիվ, ոչ

[1] Աղբյուրը՝ նույն տեղում:
[2] Աղբյուրը՝ նույն տեղում:

բարձր տեխնոլոգիաների կիրառության և ոչ էլ արտադրական խոշոր ծավալների ու մասշտաբի էֆեկտի առկայության շնորհիվ: Հիմնականում այս ենթաճյուղը մրցունակ էր որակավորված աշխատուժի ու դրանց տրվող միջազգային ստանդարտներով համեմատաբար ցածր աշխատավարձի հաշվին: Ըստ էության՝ այս վերջին հանգամանքներն էլ արտադրանքը դարձնում էին էժան և մրցունակ այլ համանման արտադրանքների համեմատ:

Այսպիսով, հիմնվելով կատարված վերլուծության արդյունքների վրա, ամփոփելով ու ամբողջացնելով սույն հոդվածի հիմնական ասելիքը, կարելի է ընդհանրացնել, որ ներկայումս թեթև արդյունաբերության ճյուղը մտել է զարգացման նոր փուլ՝ իր հետ բերելով մի շարք համակարգային ու ներճյուղային խնդիրներ: Ճյուղում ներգրավված ձեռնարկություններն աշխատում են իրենց հզորությունների բավականին ցածր մակարդակով՝ զուգորդված շրջանառու միջոցների սղությամբ, արտահանման կառավարման փորձի ու, այսպես կոչված, «նոու հաու»-ների պակասով, մարքեթինգային մրցունակ ռազմավարության բացակայությամբ և սույն հոդվածի շրջանակներում արդեն իսկ ակնարկված արտադրանքի սեփական դիզայնի ու ավարտուն փաթեթավորման բացակայությամբ:

ԱՐՄԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԾՈՎԱՅԻՆ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Փոքր տնտսեությամբ երկրների վերաբերյալ աշխատանքային ծրագրի նպատակը, որը ընդունվեց ԱՀԿ Չորրորդ նախարարական համաժողովի ժամանակ Դոհայում, դա առևտրի հետ կապված առկա հիմնախնդիրների լուծման վերաբերյալ որոշումների կայացումն էր, որպեսզի փոքր և խոցելի երկրներն էլ ավելի խորությամբ կարողանան ինտեգրվել համաշխարհային առևտրային համակարգին: Այդ որոշման զարգացման համար ԱՀԿ Կոմիտեի Հատուկ առևտրին և զարգացմանը վերաբերող նիստերի ընթացքում քննարկվում են այն բոլոր բնութագրական դժվարությունները, որոնց բախվում են այդ երկրները, այդ թվում կապված իրենց աշխարհագրական դիրքի առանձնահատկության և տնտեսական կախվածության բարձր ցուցանիշների հետ:

Առանձնահատուկ հիմնախնդիրները, որոնց հետ բախվում են ծովային ելք չունեցող զարգացող երկրները, ամենից առաջ կապված են վերջիններիս աշխարհագրական դիրքի հետ, որը բերում է միջազգային համագործակցության մեջ նրանց նվազագույն և անշահավետ մասնակցությանը՝ հատկապես առևտրի շրջանակներում: Դա իր մեջ ներառում է՝ շուկա մուտք գործելու բարձր ծախսերը, ծովային ելք ունենալու համար արտահանվող ապրանքների տարանցիկ փոխադրման համար զգալի ծախսերի իրականացումը, ներքին շուկա ներմուծման գործընթացներում հարևան երկրներից մեծ կախվածությունը, տարանցիկ հանդիսացող երկրների հետ համանման արտահանվող ապրանքների շրջանակներում մրցունակության առկայությունը, կախվածությունը արտահանվող ապրանքների սահմանափակ տեսականուց, ցածր մրցունակությունը, ոչ բավարար գրավչությունը ՕՈՒՆ-ի համար:

Չնայած շատ երկրներ, որոնք մուտք չունեն դեպի ծով, բայց արդեն սկսել են առևտրի ազատականացման ծրագրերը իրականացման գործընթացները (փաստորեն, նրանց տնտեսական խոցելիության տարրերից մեկը հանդիսանում է նրանց տնտեսությունների բացությունը[1]), այդ միջոցառումների արդյունքները բերեցին բարձր սոցիալական ծախսերին և չհասան աղքատության կրճատման սպասված մակարդակին: Կապված սրա հետ, հարկ է նշել, որ ՄԱԿ-ի հազարամյակի Դեկլարացիայում նշվում է «Ծովային ելք չունեցող, կամ փոքր կղզյակային պետությունների հատուկ պահանջների բավարարման» անհրաժեշտության մասին:

Ծովային ելք չունեցող երկրների առանձնահատուկ ցուցանիշներն իրենց մեջ ներառում են հետևյալ տարրերը՝

- ծովային ելք չունեցող 31 երկրներից 16-ը որակավորվում են որպես առավել թույլ զարգացած երկրներ,
- ծովային ելք չունեցող երկրներից մեծ մասը հանդիսանում են զարգացող երկրներ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի առավել ցածր ցուցանիշով: Չհաշված առավել թույլ զարգացած երկրները, 9 ծով չունեցող այլ երկրներում, համախառն ազգային եկամտի ցուցանիշը փոքր է 1000 ԱՄՆ դոլարից, իսկ 5-ի մոտ՝ 500 ԱՄՆ դոլարից (Զիմբաբվե, Ղրղզստան, Մոնղոլիա, Տաջիկստան, Ուզբեկստան[2]),
- ծովային ելք չունեցող երկրների համար տրանսպորտային և ապահովագրական ծախսերը կարող են հասնել արտահանվող ապրանքների և ծառայությունների արտահանման ընդհանուր ծավալի մոտ 14.1%-ին: Այս պայմաններում արտահանման համար այլ երկրների կողմից տրամադրած ցանկացած մաքսային սակագնային արտոնություններ կորցնում են իրենց պոտենցիալ արդյունավետությունը: Մնացած զարգացող երկրների համար նշյալ ցուցանիշը կարող է հասնել 8.6 % (այն երկրների համար,

[1] http://www.acici.org/aitic/documents/IBs/IB2_ru.htm
[2] http://www .worldbank .org /data /wdi 2004/